ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-ԻՑ 23-Ը ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

ՎԱՀՐԱՄ ԳԱՍՊԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ Վարչապետին կից Ատոմային էներգիայի անվտանգության խորհրդի (ԱԷԱԽ) գործադիր քարտուղար, «ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ Գլխավոր տնօրեն

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Ավստրիայի Հանրապետություն, ք.Վիեննա, 2018թ. նոյեմբերի 19-23-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ)

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցելու Ատոմային էներգիայի միջազգային գործակալության Կառավարիչների խորհրդի 2018թ. նոյեմբերի 19-23-ը կայացած նիստին

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

1. ԱԷՄԳ Գլխավոր տնօրենի և նրա տեղակալի ելույթները տեխնիկական համագործակցության և 2019թ. ԱԷՄԳ-ն կողմից առաջարկվող ծրագրի քննարկում (փաստաթուղթ GOV/2018/44),

2. 2018թ. տեխնիկական համագործակցության արդյունքների գնահատումը, համաձայն GOV/2018/45 փաստաթղթի,

3. Մերձավոր արևելքում և Հյուսիսային Կորեայում միջուկային զենքի ստեղծման և կանխարգելման խնդիրների քննարկում,

4. Մերձավոր արևելքը ոչ միջուկային գոտի ստեղծելու արաբական երկրների կատարված առաջարկի քննարկում,

5. Միջուկային ստուգումների, այդ թվում երաշխիքի համաձայնագրի կիրառում Մերձավոր արևելքում և Հյուսիսային Կորեայում և այլն:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավարն էր ԿԽ-ում Հայաստանի ներկայացուցիչ, դեսպան՝ Արման Կիրակոսյանը, անդամները՝ ՀՀ Վարչապետին կից Ատոմային էներգիայի անվտանգության խորհրդի (ԱԷԱԽ) գործադիր քարտուղար Վահրամ Պետրոսյանը, Ավստրիայի Հանրապետության փոխդեսպան Կարինե Խուդավերդյանը ՀՀ մշտական ներկայացուցիչ Վիեննայում, խորհրդական Վահագն Փիլիպոսյանը:

ՀՀ պատվիրակության ելույթը ներկայացրեց պրն. Ա. Կիրակոսյանը, ուր անդրադարձ կատարվեց ԱԷՄԳ տեխնիկական համագործակցության շրջանակներում ՀՀ-ում կատարված աշխատանքներին, Հայաստանի Հանրապետության հետ 2018թ. սեպտեմբերի 17-ին կնքված Տեխնիկական համագործակցության (ՏՀ) հիմնական ուղղություններին: Պատվիրակության անունից հայտնվեց, որ լիովին հավանության է արժանանում ԱԷՄԳ ՏՀ 2018թ. կատարված աշխատանքները և 2019թ. ներկայացված ՏՀ ծրագիրը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Քննարկումից հետո կազմվեց հաշվետվություն 2018թ. Տեխնիկական համագործակցության (ՏՀ) արդյունքների, ինչպես նաև 2019թ. տեխնիկական համագործակցության ծրագրի և նրա մեջ ներառված հիմնական ուղղությունների վերաբերյալ:

Մերձավոր արևելքում և Հյուսիսային Կորեայում միջուկային զենքի ստեղծման և տարածման հարցերի վերաբերյալ, բուռն քննարկումներից հետո, վերջնական եզրահանգումներ չկատարվեցին:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2018թ. սեպտեմբերի 17-ին ՀՀ և ԱԷՄԳ կողմից ստորագրված Տեխնիկական համագործակցության ծրագրերի (CPF) իրականացում 2018-2023թթ. համար, որն իր մեջ ներառում է 5 կարևորագույն կետեր:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

27.11.2018 թ.